

ԲԱԺԻՆ 10. ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՍՓՅՈՒՈՔՈՒՄ  
РАЗДЕЛ 10: АРМЯНСКАЯ ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ В  
ДИАСПОРЕ  
SECTION 10: ARMENIAN EDUCATION IN THE DIASPORA

ՀԱԼԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ  
ԴԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՁ

Եզանեան Գայիանէ,  
Քիլերճեան Պէթթի

*Խ. Արովյանի անվ. հայկական պետական մանկավարժական  
համալսարան, Հայաստան*

**Համառոտ ներածական:** Յետեղեռնեան Սփիւռքը աւելի քան 100 տարեկան է: Ամբողջ հարիւր տարիներու ընթացքին սփիւռքի բոլոր կրթարաններն անխտիր ջանացին իրենց ինքնութիւնը պահպանել նոր միջավայրերու մէջ նոր մարտահրաւերներու դէմ յանդիման: Անոնք ապաստանած ցամաքամասերու վրայ կառուցեցին եկեղեցի, դպրոց, մշակութային եւ միութենական հաստատութիւններ, կազմակերպութիւններ ու դարձան հայ օճախներ, ուր կերտուեցաւ յետեղեռնեան սփիւռքի հայկական համայնքներու նոր կեանքը:

Սոյն յօդուածին մէջ կը քննարկուի 1947-էն Հալէպի մէջ գործող Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի (յետայսու՝ ԱՔԵՃ) դերը հայապահպանութեան եւ համայնքի ազգային դաստիարակութեան վերաբերեալ՝ նշելով, որ Ճեմարանը եղած է ու ցայսօր եւս կը հանդիսանայ միակ միջնակարգ-երկրորդական դպրոցը, ուր ուսանողներուն 100%-ը հայեր են:

**Բանալի բառեր:** Ազգային վարժարան, հայապահպանում, ազգային դաստիարակութիւն, արեւմտահայերէն, հայկական դպրոցի առաքելութիւն, համայնք:

**Հիմնախնդիրը:** Ճեմարանը իր 72-ամեայ գոյերթին ինչ դեր խաղացած է համայնքն ներս՝ եկեղեցիին եւ միութիւններուն հետ համագործակցաբար:

**Հիմնախնդիրին առնչուող արդիական հետազոտութիւններու եւ հրատարակութիւններու կարճ վերլուծութիւն:** Եթէ հնարաւորութիւն ունենանք ուսումնասիրելու հարիւրամեայ հայկական կրթօճախներու պատմութիւնը, Միջին

Արեւելքի երկիրներուն մէջ հայկական հաստատութիւնները, կառոյցները կ'անձնանան իրենց երկարատեւութեամբ:

Սփիւռքի եւ յատկապէս Հալէպի հայկական կրթարաններու կատարած դերի եւ կարեւորութեան անդրադարձող որեւէ աշխատանք անպայման անդրադարձած է Հալէպի Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի անգուգական դերին եւ կարեւորութեան գաղութի ազգային կեանքին մէջ՝ կարեւորելով անոր մարդակերտութեան եւ հայակերտութեան վսեմ գործը:

Հայրենի եւ սփիւռքի մտաւոականներ կամ գիտնականներ կամ հետազոտողներ անդրադարձած են Հալէպ գաղութի պատմութեան վերջին 100-ամեակին, անպայման վեր հանած են ԱՔԵՃ նպատակներն ու առաքելութիւնները, որ հայեցի դաստիարակութիւնն է:

**Յօդուածի նպատակը:** Այս աշխատութեան նպատակն է դիտել տալ Հալէպի Մայր Գաղութի մէջ սերունդներ դաստիարակած կրթական օճախին՝ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանին: Այս կրթօճախը, հակառակ տարապայման դրութեան, կը շարունակէ իր անփոխարինելի առաքելութիւնը: Կը փրկուին նաեւ անոր տեսիլքը ունեցող եւ զայն յաջողցնող մարդկային ազնիւ ճիգին տէրերը, կը գնահատուին մշակները: Կը յառաջանայ նաեւ կարելիութիւնը, այդ տուեալներն ու տեղեկութիւնները իբրեւ աղբիւր օգտագործելով, համադրաբար յառաջացնել հալէպահայ կրթական պատմութեան վերջին եօթանասուն տարուան պատումի սպիտակ գիրքի էջերուն մէկ մասը:

**Հետազօտութեան նորոյթը:** Թեման արդիական է, որովհետեւ հակառակ Սուրիոյ մէջ տիրող ներկայի իրավիճակին, հակառակ կրթական համակարգի դիմագրաւած դժուարութիւններուն՝ այսօր եւս հայ համայքի ուսումնակրթական հարցերու պատասխանատուները ի գին ամէն ինչի կը փորձեն ներկայ ճգնաժամը յաղթահարել, հայկական կրթական ու մշակութային հաստատութիւնները վերականգնել, ինչպէս նաեւ ամրապնդել Սփիւռքի զօրացումին եւ հայրենիք-Սփիւռք կապերը:

**Հիմնական նիւթի շարադրանքը:** Այսօր, մանաւանդ սփիւռքի մէջ, դժուար է հայ մնալ. բայց ներկայիս հայեր կ'ապրին 108 տարբեր երկիրներու մէջ, որոնք օրն ի բուն պայքար կը մղեն հայը հայ պահելու հայկական կառոյցներով՝ շաբաթօրեայ եւ ամէնօրեայ դպրոցներով, մշակութային, մարզական եւ երիտասարդական միութիւններով:

Հալէպ 1920-ական թուականներուն դարձած էր Արեւմտահայաստանէն եւ յատկապէս Կիլիկիայէն գաղթած մեծ թիւով հայերու ապաստարանը: Շուրջ 40-50 հազար հայեր (անոնք, որոնք միջոց ունէին) կը տեղաւորուէին քաղաքի այն

թաղամասերուն մէջ, ուր քրիստոնէայ տարրը աւելի մեծ թիւ կը ներկայացնէր, իսկ ուրիշներ կը տեղաւորուէին հին քաղաքի խաներուն մէջ: «Սուրիահայ տարեցոյցը» 1923-ի տուեալներով Սուրիոյ մէջ հայութեան մեծագոյն կեդրոնը կը նկատէ Հալէպը:

Այսպիսով՝ յետեղեռնեան առաջին տարիներուն ջարդէն մազապուրծ վերապրող սերունդը մայրենի լեզուի իմացութիւնն ու անաղարտ պահելը համարեց հայեցի դաստիարակութիւնն ու ազգային ինքնութիւնը վառ պահող միակ ուղին: Թէեւ հայը Սուրիոյ մէջ բախեցաւ իր ազգային ինքնութիւնը կորսնցնելու եւ ձուլուելու վտանգին, սակայն Հայ եկեղեցոյ շնորհիւ կրցաւ պահպանել հոգեւոր եւ մշակոյթի աւանդները: «Օտար հողի վրայ հանգրուանելէն ետք, Սուրիոյ հայութեան առաջին քայլը եղաւ հայկական եկեղեցիները կառուցելը, որուն անմիջապէս յաջորդեց եկեղեցիներուն կից հայկական դպրոցի բացումը՝ մայրենի լեզուն պահպանելու, հայ երեխային մէջ ազգային ինքնագիտակցութեան բարձր ոգի սերմանելու եւ գիտութեան լոյսը յարատեւ պահելու համար» [5, 487]:

Սուրիոյ մէջ տասնամեակներ շարունակ հայ դպրոցի կարեւորագոյն դերը եղաւ հայոց լեզուն հաղորդակցութեան բնական միջոց դարձնել:

Սուրիահայութիւնը, դասուելով երկրի փոքրամասնութիւններու շարքին, վայելեց Սուրիոյ պետութեան եւ ժողովուրդին հիւրընկալութիւնը, իսկ կրթական ոլորտէն ներս՝ որոշ առանձնաշնորհումներ, այն ալ՝ սեփական դպրոց ունենալու հանգամանքը եւ հայերէն լեզուն որպէս ծիսական լեզու ուսուցանելու թոյլտուութիւնը. «Հայ մարդը Սուրիոյ մէջ մշտապէս յարգուած անձնատրութիւն է՝ վաճառական, մտաւորական, թէ որեւէ մասնագիտութեան ներկայացուցիչ՝ բժիշկ, ճարտարապետ եւ այլն: Սուրիոյ բոլոր շրջաններուն մէջ հայերը յարգուած են շարք մը ոլորտներու մէջ: Պիտի նշեմ, որ շարք մը ոլորտներու մէջ հայերը յաջողութիւններու հասած են: Հետեւաբար հակահայկական որեւէ դրսեւորում չէ եղած Սուրիոյ մէջ վերջին տասնամեակներուն: Հայկական եկեղեցական, դպրոցական կեանքը համայնքը կը կազմակերպէ՝ օգտուելով պետական համապատասխան օրէնքներէն: Պետական շրջանակներն ալ, իրենց հերթին, մշտապէս ըմբռնումով մօտեցած են համայնքային կրթական խնդիրներուն: Որեւէ լուրջ բախում չէ եղած իշխանութիւններուն հետ» [4, 95]:

Քառասունական թուականներու երկրորդ կիսուն հրատապ հարց կը համարուէր երկրորդական Է-ԺԲ (7-12-րդ) կարգերու վարժարան ունենալու խնդիրը: Ֆրանսական վարժարաններու փակումով, ուր կը յաճախէին հարիւրաւոր

հայ ուսանողներ, մեծ թիւով թեկնածուներ թերաւարտ կը մնան: Քայլեր կը ձեռնարկուին երկրորդական վարժարանի մը պահանջքը լրացնելու համար:

Բանակցութիւններու նիւթ կը դառնայ Նոր Գիւղի կամ Մէյտան կոչուող թաղամասին մէջ գտնուող հանգուցեալ Օրիորդ Քարէն Եփփէ Դանիացի բարերարուհիին այրիանոց-որբանոցը: Բանակցութիւնները կը տանին հոն, ուր միջնակարգ-երկրորդական վարժարանի լաւագոյն վայրը պիտի ըլլայ Քարէն Եփփէի այրիանոցի կալուածը, որուն սեփականութիւնը ազգին պէտք է տրուի, ու դպրոցը, առ ի երախտագիտութիւն Քարէն Եփփէի մարդասիրական մեծ գործունէութեան, պիտի կոչուի իր անունով: «1947-ին ազգային իշխանութիւնները, նկատելով այրիանոց մը պահելու հետզհետէ նուազող անհրաժեշտութիւնը, կապ կը հաստատեն բարերարուհիին պարագաներուն հետ՝ այրիանոցի 10.000 քմ տարածքով կալուածը երկրորդական վարժարանի մը համար օգտագործելու նպատակով: Նորաբաց երկրորդականը անոր յիշատակին ալ կը կրէ **Քարէն Եփփէ Ազգային Ճեմարան** անունը» [2, 372-373]: Ճեմարանի պաշտօնական բացումին իր խօսքով հանդէս կու գայ թեմի Առաջնորդ հայրը, որ, անդրադառնալով օրիորդ Քարէն Եփփէի կեանքին, կ'ըսէ. «Եկաւ ան հեռաւոր Դանիայէն մեր պատմութեան մուտք օրերուն, երբ կը հալածէին մեզ բախտն ու ջարդարար թուրքը, երբ մեր բեկորները՝ աստանդական ու անտեր, ափ կ'անոնէին ասպանջական աս երկրի դուռները՝ իրենց ֆիզիկական գոյութիւնը, իրենց սրսփուն գոյութիւնը պատսպարելու համար: Ամբողջ երեսուն տարի օրիորդ Քարէն Եփփէ խառնուեցաւ մեր կեանքին, միսէն միս ու ոսկորէն ոսկոր **հա՛յ** դարձաւ, շաղախուեցաւ մեր հանրային գործունէութեան եւ օրէ օր աւելի խոր ու իրաւ ընտանութիւն մը զգաց իր եւ մեր միջեւ: Կրնամ ըսել, թէ զոհաբերեց ան իր կեանքը հայ ժողովուրդին համար, գոր կը նկատէր գերիվեր բոլոր ազգերէն, «քաղաքակրթութեան» դիմակի տակ մահ եւ սպանութիւն սփռող բոլոր ժողովուրդներէն» [2, 373]:

Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանը ունէր այլ առաւելութիւն մը. դպրոցը կը գտնուէր Հալէպի ամենէն հայաշատ թաղամասին՝ Մէյտանի կամ Նոր Գիւղի մէջ ու շրջապատուած էր Ազգային Սահակեան, Ջաւարեան, Մեսրոպեան, Գերմանիկեան, Կիլիկեան, Ուսումնասիրաց եւ այլ հայկական նախակրթարաններով:

Ժամանակակիցներ կը վկայեն, որ այս գործի յաջողութեան Առաջնորդի՝ Տ. Ջարեհ ծ. Վրդ. Փայապեանի կողքին կարեւոր դեր կ'ունենայ Հրաչ Փափազեան, որ ժամանակակիցներու կողմէ կը նկատուի Ճեմարանի հիմնադիրներէն մէկը:

Ազգային Քարեն Եփփե ճեմարան կրթական կառոյցը հայ վարժարան մը չեղաւ՝ բառին սովորական իմաստով, այլ հայակերտումի իր առաքելութեամբ դարձաւ աղբիւր ազգային վառ ապրումներու եւ ձգտումներու, դարբնոց՝ նոր սերունդներու հայեցի դաստիարակութեան:

Ազգային Քարեն Եփփե ճեմարանը գլխաւոր ներկայութիւն դարձաւ Սուրբիոյ հայութեան կեանքէն ներս եւ իր կարեւոր դերը ունեցաւ գաղութի կազմաւորման եւ կազմակերպչական աշխատանքներուն մէջ:

Ճեմարանը լոկ կրթական շէնք մը չէ, այլ՝ ոգի ներարկող, հաւատք ջամբող, տեսիլք փոխանցող սրբազան վայր մը դարձաւ գիտութիւն բաշխող հաստատութիւն մը ըլլալէ առաջ: «Քարեն Եփփե ազգային ճեմարանն իր գոյութեամբ նոր շրջադարձային փուլ բացեց ոչ միայն սիրիահայութեան կրթամշակութային կեանքում, այլեւ անգնահատելի ներդրում ունեցաւ հայապահպանութեան գործում» [1, էջ 256]:

Այսօր գրեթէ ամէն տեղ Սփիւռքի մէջ, կրթական ու մշակութային մարզերուն մէջ ճեմարանականներ կան իբրեւ ղեկավար, ուսուցիչ, գրող, գործօն անդամ, որ ճեմարանէն ստացած աւանդը կը բաշխեն համայն հայութեան: «Ներկայիս Քարեն Եփփե Ազգային ճեմարանը Սփիւռքի մեծագոյն միջնակարգ երկրորդական վարժարանն է» [2, էջ 256]:

Առ այդ, Հալեպի Ազգային Քարեն Եփփե ճեմարանի տնօրէնութեան թոյլատուութեամբ իրականացուցաւ ուսումնասիրութիւն մը, որուն համար նախապէս պատրաստուցաւ հարցաթերթիկ: Հարցաթերթիկին մէջ տեղադրուած են զաւակ-ծնողք յարաբերութիւններու եւ հայագիտական խնդիրներու առնչուած հարցումներ, որոնց նպատակն է կազմել ծնողք-ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւններու մասին եւ ծնողներուն տեսակետներուն շուրջ կարծիքներ ու անոր հիման վրայ մշակել համապատասխան աշխատանքային ռազմավարութիւն: Այդ արդիւնքները այսօր կը ներկայացնենք ընթացս՝ տալով որոշակի մեկնաբանութիւններ:

Հարցաթերթիկի առաջին հարցը, որ կը վերաբերէր ծնողներուն, թէ «շրջանաւարտ րտ էք Ազգային Քարեն Եփփե ճեմարանէն», անոնցմէ՝

26-ը (15.2 %) հայրը եւ մայրը շրջանաւարտ են
19-ը՝ (11.11 %) միայն հայրը շրջանաւարտ
54-ը՝ (31.57 %) միայն մայրը շրջանաւարտ
72-ը՝ (42.1 %) ոչ մէկը շրջանաւարտ

Արդիւնքներէն կեզրակացնենք, թէ մեծ թիւը ոչ շրջանաւարտ ծնողներն են, որով կը հաստատենք, թէ անոնք կա՛մ չեն ամբողջացուցած ճեմարանի վեց

տարուան ուսումնառութիւնը, կա՛մ շրջանաւարտ են այլ դպրոցներէ, սակայն անոնք իրենց զաւակին ուսման ընթացքը կը տեսնեն ճեմարանէն ներս:

Երկրորդ հարցը, թէ «ո՞րն է ընտանիքի անդամներուն հաղորդակցութեան լեզուն».

151-ը (88.3 %) տան հաղորդակցութեան լեզուն հայերէնն է
18-ը (10.52 %) հաղորդակցութեան լեզուն զուգահեռ հայերէնը եւ արաբերէնն է
2-ը (1.16 %) հաղորդակցութեան լեզուն այլ է

Առաջին հայեացքէն, անշուշտ ծնողներու այս մօտեցումը ոգեւորիչ է, եւ կը թուի՝ կարելի չէ մտահոգուիլ, որովհետեւ ծնողներուն մեծ մասը ի վերջոյ կը նշեն, որ ընտանեկան յարաբերութիւններու լեզուն հայերէնն է: Սակայն յատկանշական է, որ բազմալեզու ընտանիքներուն երեխաները լիարժէք չեն տիրապետեր ո՛չ հայերէնին, ո՛չ ալ իրենց նշած մնացած լեզուներուն:

Երրորդ հարցը, թէ «տան մէջ կա՞ն հայերէն գիրքեր, պարբերաթերթեր...»: Ծնողներէն 157-ը (91.81%) դրական պատասխանած է, իսկ 14-ը՝ (8.18%) ժխտական: Այս թիւերու վերլուծութենէն ետք զարմանալի չէ, որ հարցումին մասնակից ծնողները կը գնահատեն եւ կը կարելորեն հայոց լեզուի դասերը: Հակառակ, որ պատասխանները ոգեւորութիւն կը ներշնչեն, սակայն այսօրուան սերունդը եւ յատկապէս Սփիւռքի զաւակները որքանո՞վ կը հետաքրքրուին հայերէն լեզուով, հայ գիրով ու գրականութեամբ, անոնցմէ ո՞րքան տոկոսը այսօր նոյնիսկ կը մտածէ իր տան գրադարանէն գիրք մը կամ նոյնիսկ պարբերաթերթ մը թերթատել:

Առաւել ուշագրաւ են «Կարելոր կը նկատէ՞ք հայերէն լեզուի դասաժամերը նախակրթարանէն ետք» հարցին ծնողներու տուած պատասխանները: Հարցումին ծնողներէն 170-ը (99.41 %) կարելոր կը համարէ հայերէն լեզուի դասաժամերը, իսկ միայն մէկ ծնողք (0.58 %) զայն կարելոր չի նկատեր:

«Երկարատեւ ու յամառ բանակցութիւնների շնորհիւ հնարաւոր եղաւ ձեռք բերել հայկական դպրոցներում մայրենի լեզուի ուսուցման թույլտուութիւնը՝ այս անգամ կրթութեան բովանդակութեան մէջ ներառելով որպէս ծիսական լեզու» [2, 373]: Ճեմարանին մէջ Է-ԺԱ (7-11-րդ) կարգերու ուսանողներուն տրամադրուած է շաբաթական 4 հայերէն լեզուի եւ 2 կրօնագիտութեան դասաժամեր, իսկ երկրորդականի ԺԲ (12-րդ) կարգի ուսանողներուն տրամադրուած են 3 (գրական բաժնին), 2 (գիտական բաժնին) հայերէն լեզուի եւ 2 կրօնագիտութեան դասաժամեր՝ նկատի առած պետական միւս առարկաներու դասաբաշխումը:

Հինգերորդ հարցը առնչուած է չորրորդին. «Եթէ 4-րդ հարցին պատասխանած էք ԱՅՈ՛՛, բաւարար կը նկատէ՞ք հայերէն լեզուի դասաժամերը»: Ծնողներէն՝

132-ը (77.19%) բաւարար կը համարէ
39-ը՝ (22.80%) անբաւարար

Չորրորդ եւ հինգերորդ հարցերուն պատասխանները յոյսի նշոյլ մը կու տան, թէ Սփիւռքի մէջ տակաւին հայ ընտանիքին մօտ առաջնահերթ առարկայ է հայերէն լեզուի իմացութիւնը: Այստեղ տեղին է նշել, թէ Ազգային Քարէն Եփփիէ ճեմարանը Հալէպի միակ հայկական ճեմարանն է, որուն 100 % աշակերտութիւնը կը մասնակցի հայերէն լեզուի եւ կրօնագիտութեան դասաժամերուն, բացառիկ պարագաներու միայն այն աշակերտները, որոնք կը դժուարանան հայերէն լեզուն սորվիլ, նկատի առած, որ տեղափոխուած են այլ բնակավայրէ, ուր հայկական դպրոց չի գործեր, կամ ծնողներէն մէկը հայ չէ, եւ տան մէջ հաղորդակցական լեզուն հայերէնը չէ, անոնց կը տրամադրուի յատուկ ուշադրութիւն եւ ծրագիր:

Հարցաթերթիկին յաջորդ հարցը հետեւեալն էր. «Կը փորձէ՞ք ձեր զաւակին դաստիարակչական խնդիրները լուծել համագործակցաբար ճեմարանին տեսչութեան հետ»: Ծնողներէն՝

140-ը (81.87 %) դրական պատասխան տուած է
31-ը՝ (18.12 %) բացասական

Այս արդիւնքէն կը հաստատենք, թէ ծնողները միշտ ալ մեծ վստահութիւն ունեցած են ճեմարանի անձնակազմին նկատմամբ, կը հաւատան, որ վարչական եւ ուսուցչական կազմերը միշտ ալ իրենց կարելին կ'ընեն ամբողջացնելու ծնողքին դերը դպրոցէն ներս այն տեսանկիւնէն, որ հայ դպրոցը պարզ շէնք չէ, այլ՝ հայ ընտանիք:

Ակնյայտ է հետեւեալ հարցին՝ «Անհրաժեշտ է ներկայ ժամանակաշրջանին եւ պայմաններուն հայերէն լեզուն անաղարտ պահել եւ առաջնահերթ լեզու նկատել» արդիւնքը, ուր ծնողներէն՝

132-ը (77.19 %) անհրաժեշտ կը նկատէ
39-ը՝ (22.80 %) ոչ անհրաժեշտ

Վստահ ենք, որ ծնողներու ոգեւորիչ պատասխանը բխած է այն համոզումէն, որ իւրաքանչիւր հայու գոյութիւնն ու ինքնութիւնը կը սկսի լեզուէն, եւ հայ լեզուն մշտանորոգ ու կանգուն պահելը աւելի կը վսեմացնէ անոր ինքնութիւնը, կը մաքրէ խիղճը: Հայկական Սփիւռքի ծնողներուն ուսերուն բեռը շատ աւելի ծանր է, քան հայրենի հողին վրայ ապրողինը, այն հանգամանքէն, որ Սփիւռքի

մէջ նուազ է հայրենի հողին ուժը, բայց հակառակ որ Սփիւռքի հայութիւնը իր հայրենիքին մէջ չ'ապրիր, սակայն ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՆՈՐ ՄԷՋ ԿԱՊԸՐԻ:

Բաժնուած հարցաթերթիկին մէջ գետեղած էինք այս հարցը. «Ձեր կարծիքով ի՞նչ է հայկական դպրոցին առաքելութիւնը»: Ծնողները պատասխանած են, թէ հայ դպրոցին դերը կը համարեն «քրիստոնէայ հայեր պատրաստելը», «հայեցի եւ ազգային դաստիարակութիւն տալը», «հայ լեզուի եւ մշակոյթի պահպանումը» ու հիմնականը Սփիւռքի տարածքին «հայապահպանումը»: Ծնողներու այս մտեցումը անտարակոյս ազգանպաստ է եւ կը խօսի ծնողներու մեծամասնութեան ազգային բարձր գիտակցութեան մասին: Սակայն այս գիտակցութիւնը կեանքի վերածելու համար գործունէութիւնը որքանո՞վ ապահովուած է ծնողներուն կողմէ:

Հարցաթերթիկին վերջին հարցն էր. «Ի՞նչ կ'ակնկալէք Ազգային Քարէն Եփփէ ճեմարանէն ազգային դաստիարակութեան գծով»: Ծնողները կը հաստատեն, թէ Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը իր հիմնադրութեան օրէն 1947-էն ի վեր կը կատարէ իրեն վստահուած վսեմ առաքելութիւնը, կը պատրաստէ ապագային Սփիւռքի ղեկավարները, ան տարիներու իր նուիրումով միշտ ալ աշակերտներուն տուած է ազգային դաստիարակութիւն: Անոք կը հաւատան, որ ճեմարանը պիտի շարունակէ իր աշխատանքը ազգային դաստիարակութեան գծով:

**Եզրակացություններ, հետագայ հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ:** Հարցաթերթիկի արդիւնքներէն կը հաստատենք, որ Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը Հալէպի ու ինչու չէ Միջին Արեւելքի հայակերտման ու մարդակերտման եզակի ամրոցներէն մին է, սոյն կառոյցը կը պարտինք իր հիմնադիրներուն Դանիացի օրիորդ Քարէն Եփփէին, օրուան առաջնորդ Ջարեհ Ծ. Վրդ. Փայալեանին եւ ազգային գործիչ Հրաչ Փափագեանին: «Հոգով հայացած դանիացին մարդկային բարձր ու բացառիկ յատկանիշների մարմնացումն էր, մարդկութեան խտացումը խիղճը, որ հեռաւոր Դանիայից եկաւ Հալէպ ու իր ունեցած ամենաթանկ բանը՝ կեանքը, նուիրեց հայութեանը ու յաւերժ անմահացաւ նրանց սրտերում եւ հոգիներում» [1, 260-261]:

Եօթը տասնամեակներ շարունակ ճեմարանի երդիքին տակ հասակ առած են հազարաւոր շրջանաւարտներ: Վերջիններուն ճամբան բացին այն ուսուցիչները, որոնք իրենց կեանքը մաշեցուցին ի շահ ազնիւ նպատակի: Ինչ կը վերաբերի Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն, կրթական բնագաւառներուն մէջ, կարելի է ըսել, թէ գնահատելի է: Հայաստան-Սփիւռք կրթական կապերու զարգացման տեսանկիւնէն կարելոր դերակատարում ունեն, յատկապէս Հա-



յաստանի անկախացումն էտք սփիւոքահայ ուսուցիչներու վերակաւորման դասընթացքները, որուն իրենց մասնակցութիւնը բերած են Սուրիոյ հայ համայնքի ուսուցիչները 2000 թուականէն ի վեր, սփիւոքահայ աշակերտներու հայոց լեզուի, հայ գրականութեան, հայ ժողովուրդի, եկեղեցոյ եւ մշակոյթի պատմութեանց նուիրուած ողիմպիականները, ուր 2003-2011 թուականներուն (Սուրիական պատերազմի պատճառով Սուրիան հետագայ տարիներուն չկրցաւ իր մասնակցութիւնը բերել) Սուրիոյ հայկական վարժարաններու աշակերտները աշխոյժ մասնակցութիւն ցուցաբերած են, սփիւոքահայ ուսուցիչներու Համահայկական կրթական խորհրդաժողովները, որոնք կը կազմակերպուին 2004-էն սկսած, երկամեայ պարբերականութեամբ: Այս յարաբերութիւնները ուղղուած են հայապահպանութեան խնդիրներու լուծման եւ ՀՀ-ի համար կենսական նշանակութիւն ունեցող հարցերուն Սփիւոքի համակարգուած մասնակցութեամբ:

Այսօր ալ Հայաստանի հայրենակիցներու մեծ մասը կ'այրի ՀՀ սահմաններէն դուրս, եւ շատ կարեւոր է սփիւոքի հայկական գաղթօջախներու կապը մայր Հայաստանի հետ ամրապնդել: Այս տեսանկիւնէն ՀՀ ԿԳՄՍ նախարարութիւնը կը կազմակերպէ սփիւոքահայ ուսուցիչներու վերապատրաստման ծրագիր: Ամրապնդելու յարաբերութիւնները հայրենիքին հետ՝ նախքան Սուրիոյ պատերազմական վիճակին ճեմարանի ուսուցիչները իրենց մասնակցութիւնը կը բերէին սփիւոքահայ ուսուցիչներու վերապատրաստման ծրագրին, իսկ աշակերտները իրենց մասնակցութիւնը կը բերէին Հայաստանի մէջ կայացած ողիմպիական մրցումներուն՝ միշտ ալ գրաւելով առաջին դիրքերը:

73 տարիներ անցած են ճեմարանի ծնունդէն, անոր հիմնադրութեան ու բարգաւաճման մէջ գործուն դեր ունեցող ազգայիններէն շատեր մեկնած են: Անոնք, սակայն, շատ խորաթափանց արմատներ հաստատած են ճեմարանի սուրբ հողին մէջ: Անոնց ցանած սերմերը աճած ու ճիւղաւորուած են, դարձած համայն հայութեան ծառայող հսկայ փաղանգ: Ճեմարանն ալ ժամանակի ընթացքին մեծցաւ, ճիւղաւորուեցաւ, բայց երբեք չլեղեցաւ իր նպատակէն, որուն համար ստեղծուած էր: Ան տարիէ տարի Սփիւոքին նուիրեց իր տղաքն ու աղջիկները՝ որպէս արեւմտահայերէնի ուսուցիչներ, ազգային գործիչներ ու ղեկավարներ:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002:
2. «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, 1996:

3. Չոլաքեան Յ., Յիսնամեակ Քարեն Եփփե Ազգային Ճեմարանի 1947-1997, խմբագիր Մարուշ (Կիլիլիմեան) Չոլաքեան, Օֆսեթ տպագրութիւն, Տպ. Արեւելք, Հալէպ, 1997:

4. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Միրիայի հայ համայնք, Արդի հիմնախնդիրներ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, «Լուսնակն», 2011, 154 էջ, «Հարցազրույց սիրիահայ մտավորական, Քարեն Եփփե Ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ դր. Հակոբ Չոլաքյանի հետ»:

5. Ֆիշենկճեան Ա., Սուրիոյ Հայ Համայնքի Ուսումնակրթական Հիմնահարցերը 1970-1980-ական թթ., «Հանդէս Ամսօրեայ, ՃԼԳ. Տարի, թիւ 1-12:

## **РОЛЬ АРМЯНСКОГО КОЛЛЕДЖА Алеппо Карен Еппе В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ ОБЩИНЫ**

**Еганян Гаяне,  
Килерджян Бетти**

*Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна, Армения*

### **Аннотация**

Постгеноцидной Диаспоре более 100 лет. На протяжении столетия все без исключения образовательные учреждения диаспоры пытались построить свою идентичность в новых условиях. Они строили церкви, школы, культурные и профсоюзные учреждения, организации в своей среде и стали армянскими общинами, где зародилась новая жизнь армянской диаспоры, пережившей Геноцид.

В данной статье анализируется деятельность Национального колледжа Карен Еппе Джемарана в Алеппо с 1947 года по сохранению армянской идентичности и национального воспитания общины. Отметим, что Джемаран – единственная средняя школа, где 100% учащихся – армяне.

**Ключевые слова:** Алеппо, национальная школа, сохранение армянской идентичности, национальное воспитание, армяно-армянский, миссия армянской школы, колония.

### **Список использованной литературы**

1. Арутюнян Н., Армянские школы в Ливане и Сирии, Ереван, 2002.
2. Библиографический комитет AGBU, Алеппо, Сирийско-армянский ежегодник "Гегард", Э. Историческая книга, Алеппо, 1996.
3. Чолакян Ю., Пятьдесят лет Карен Еппе, национальный Джемаран, 1947-1997, редактор Маруш (Кулимян) Чолакян, Офсетная печать, Тр. Восток, Алеппо, 1997 год.
4. Пашаян А., Арутюнян Л., «Армянская община Сирии, актуальные проблемы», Институт востоковедения НАН РА, Министерство Диаспоры РА, Ереван, "Луснакн", 2011, 154 с.
5. Фишенкджян А., Проблемы образования армянской общины Сирии в 1970-1980 гг., "Журнал дня", JLG. Год, №1-12.

## **ROLE OF THE KAREN JEPPE ARMENIAN COLLEGE IN PRESERVING THE ARMENIAN IDENTITY OF THE COMMUNITY**

**Kilerjian Betty,  
Eganyan Gayane**

*Armenian State Pedagogical University after  
Khachatur Abovyan, Armenia*

### **Summary**

The postgenocidal diaspora is over 100 years old. For a century, all educational institutions of the diaspora, without exception, have tried to build their identity in new conditions. They built a church, a school, cultural and trade union institutions, organizations in their midst and became

Armenian communities, where a new life for the Armenian diaspora that survived the genocide was born.

This article discusses the activities of the National Karen Yeppe Jemaran in Aleppo since 1947 to preserve the Armenian identity and national education of the community, noting that Jemaran is the only secondary school where 100% of the students are Armenian.

**Keywords:** Aleppo, national school, preservation of Armenian identity, national education, Western Armenian, Armenian school mission, colony.

**References:**

1. Harutyunyan N., Armenian Schools in Lebanon and Syria, Yerevan, 2002.
2. AGBU Bibliographic Committee, Aleppo, Syrian-Armenian Yearbook "Geghard", E. Historical Book, Aleppo, 1996.
3. Cholakyan Y., Fifty years of Karen Yeppe, national Jemaran, 1947-1997, editor Marush (Kulimyan) Cholakyan, Offset printing, Tr. East, Aleppo, 1997.
4. Pashayan A., Harutyunyan L., The Armenian community of Syria, urgent problems, Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia, RA Ministry of Diaspora, Yerevan, "Lusnakh", 2011, 154 p.
5. Fishenkjyan A., Problems of the formation of the Armenian community of Syria in 1970-1980. "Journal of the Day", JLG. Year, # 1-12.

*Материал был представлен и отправлен на рецензию: 16.09.2020*

*Принято к публикации: 31.10.2020*

*Рецензент: канд. фил. наук, ассистент Мери Оганнисян*

*The material was submitted and sent to review: 16.09.2020*

*Was accepted for publication: 31.10.2020*

*Reviewer: Assistant, PhD Meri Hovhannisyana*